

2020

«ԱԼՎԻՆԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՈՐՊԵՍ
ԲԱԶՄԱՖՈՒԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

ՀՀ Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր Խ. Մուրադյան փող. 3 հասցե

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ԱԼՎԻՆԱ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան
ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

ՀՀ



«ԱԼՎԻՆԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՈՐՊԵՍ ԲԱԶՄԱՖՈՒԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ
ՀԱՄԱԼԻՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ
ՀՀ Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր Խ. Մուրադյան փող. 3 հասցե

«ԱԼՎԻՆԱ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	4
1.3	Հապավումներ.....	4
1.4	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	5
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր.....</i>	7
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր.....</i>	7
1.5.3	<i>Քանդման աշխատանքներ.....</i>	Ошибка! Закладка не определена.
1.5.4	<i>Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....</i>	9
1.5.5	<i>Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ.....</i>	16
1.5.6	<i>Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց</i>	22
1.5.7	<i>Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ.....</i>	23
1.5.8	<i>Նյութերի և բնարեսուրսների օգտագործում</i>	Ошибка! Закладка не определена.
1.5.9	<i>Արտաքին ցանցեր</i>	Ошибка! Закладка не определена.
1.5.10	<i>Էլ. մատակարարում.....</i>	23
1.5.11	<i>Ջրամատակարարում և ջրահեռացում.....</i>	23
1.5.12	<i>Գազամատակարարում.....</i>	23
1.5.13	<i>Կանաչապատման աշխատանքներ.....</i>	23
2.	ՆԱԽՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	28
2.1	Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.....	Ошибка! Закладка не определена.
2.2	Կլիման	Ошибка! Закладка не определена.
2.3	Օդային ավազան.....	Ошибка! Закладка не определена.
2.4	Ջրային ռեսուրսներ	Ошибка! Закладка не определена.
2.5	Հողերի նկարագիրը.....	Ошибка! Закладка не определена.
2.6	Հողային ռեսուրսներ	Ошибка! Закладка не определена.
2.7	Բուսական աշխարհ	Ошибка! Закладка не определена.
2.8	Կենդանական աշխարհ	Ошибка! Закладка не определена.
2.9	Հողերի նպատակային և գործառնական նշանակությունը.....	Ошибка! Закладка не определена.
2.10	Թափոնների կառավարում	Ошибка! Закладка не определена.
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	46
3.1	Ռիսկերի գնահատում	47
3.2	Արտանետումների աղբյուրները	47
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	47
3.3.1	<i>Մթնոլորտային օդ.....</i>	47
3.3.2	<i>Ջրային ռեսուրսներ.....</i>	48
3.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	48
3.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....</i>	48
3.3.5	<i>Աղմուկ և թրթռում.....</i>	49
3.3.6	<i>Թափոնների կառավարում</i>	50
3.3.7	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում.....</i>	50
4.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	51
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	53
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	56
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	37
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	38

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝

«ԱԼՎԻՆԱ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝

ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր Թումանյան փողոց 36

1.5 Նախատեսվող գործունեության հասցեն՝

ՀՀ Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր Խ. Մուրադյան փող. 3 հասցե

1.6 Հեռախոս՝

+37493866767

1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝

1.3 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՄՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.4 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է վերակառուցել «ԱԼՎԻՆԱ» հյուրանոցային համալիրը որպես բազմաֆուկցիոնալ բնակելի համալիր: Բազմաֆուկցիոնալ բնակելի համալիրի վերակառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Խ. Մուրադյան փող. 3 հասցեում:

«Ալվինա» հյուրանոցային համալիրի որպես բազմաֆուկցիոնալ բնակելի համալիրի վերակառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

25.02.2009թ. ընկերությունը վերակառուցվող մասնաշենքի համար օրենքով սահմանված կարգով ՀՀ բնապահպանության նախարարի կողմից ստացել է ԲՓ-06 փորձաքննական եզրակացությունը (կցված), սակայն հաշվի առնելով տեղի ունեցած նախագծային փոփոխությունները, առաջացել է նոր փորձաքննության կարիք:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

«Ալվինա» հյուրանոցային համալիրի որպես բազմաֆուկցիոնալ բնակելի համալիրի վերակառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),
- ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.)
- «ՀՀ Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008 N 967-Ն որոշում
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում
- «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ., ՀՀ կառավարության 29.01.2010թ.
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),
- Կենդանական աշխարհի մասին (2000),
- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- Բնապահպանական կրթության մասին (2001),
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
- ՀՀ Կառավարության <<ՀՀ կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
- ՀՀ Կառավարության <<ՀՀ բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 72-Ն որոշում,
- <<ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին>> ՀՀ Կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշում
- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:
- Հաշվի են առնվել նաև`
- ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25 որոշումը «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին»

- ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշում
- ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի նիստի «ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Վերակառուցվող հյուրանոցային համալիրը գտնվում է Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր Խ. Մուրադյան փող. 3 հասցեում: Հողամասի հիմնական մակերեսը համաձայն սեփականության վկայականի, կադաստրային ծածկագիր՝ 07-005-0026-0760, կազմում է 1.3989 հա:

Հողատարածքի նշանակությունը՝ բնակավայրերի
 Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման
 Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն

Համաձայն N27 06.11.2019թ. Ճարտարապետահատակագծային առաջադրանքի կառուցապատողի կողմից նախատեսվում է գոյություն ունեցող կիսակառույց հյուրանոցային համալիրի վերակառուցում՝ կցակառույց մասերի իրականացում, կաթսայատան կառուցում, երկու բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցում:

Գոյություն ունեցող կիսակառույց հյուրանոցային համալիրի մակերեսը կազմում է 17906.12 քմ արտաքին պատերով:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ծառաթփային բուսականությունը բացակայում է:

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Կոտայքի մարզ, Ծաղկաձոր քաղաքի Խ. Մուրադյան փողոց 3 հասցեում նախագծված ու վերակառուցվող բազմաֆունկցիոնալ համալիրի աշխատանքային նախագծի համար հիմք է հանդիսացել Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից 06 նոյեմբերի 2019թ. տրված N27 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Նոր բազմաֆունկցիոնալ համալիրը բաղկացած է երեք մասնաշենքից: Վերակառուցվող կիսակառույցի առաջին մասնաշենքը իր մեջ ներառում է մեկ նկուղային եվ իննը վերգետնյա հարկեր, հարկի մակերեսը կազմում է 1875 քմ, շինության ամբողջ մակերեսը՝ 18900: Ընդհանուր 352 բնակարան:

Երկրորդ նոր նախագծվող մասնաշենքը բաղկացած է մեկ նկուղային, վեց վերգետնյա հարկերից, հարկի մակերեսը կազմում է 510 քմ, շինության ամբողջ մակերեսը 3550 քմ: Ընդհանուր 53 բնակարան:

Երրորդ նոր նախագծվող մասնաշենքը բաղկացած է մեկ նկուղային և ութ վերգետնյա հարկերից, հարկի մակերեսը կազմում է 755քմ, իսկ շինության ընդհանուր մակերեսը՝ 6780քմ:

Կառույցի առաջին վերգետնյա հարկը, որը համապատասխանում է նախագծի ±0,00 նիշին, նախատեսված է որպես համալիրի հասարակական հարկ:

Երկրորդ և երրորդ մասնաշենքերում նկուղային հարկերը նախատեսված են որպես ավտոկայանատեղիներ իսկ վերգետնյա հարկերը՝ բնակելի:

Գոյություն ունեցող կառույցի վերգետնյա հարկերի բարձրությունները համապատասխանաբար 0,00 նիշում 5 մ է, իսկ վերին հարկերում՝ 3,3մ:

Ճակատների երեսապատման նյութերն են ցոկոլային հարկերում բազալտ, ճակատները հիմնականում բնական քարից խառը շարվածքներ, պրոֆիլավոր:

Մուտքային հատվածներում նախատեսված է իրականացնել տեքստիլային սակավաշարժ խմբերի համար:

Աստիճանավանդակներում եվ ավտոհանգրվաններում նախատեսված է ծխահեռացման համակարգ:

Տարածքում նախատեսված է բացօթյա 150 ավտոկայանատեղի :

Բնակելի համալիր բեռուցման և տաք ջրամատակարարման համար նախատեսվում կառուցել կաթսայատուն:

Նախագծվող կաթսայատունը կսպասարկի համալիրի ջեռուցման օդափոխության և տաք ջրամատակարարման համակարգերին: Կաթսայատունը համալրված է գերմանական Buderus ֆիրմայի Logano S825L-2500 մոդելի՝ երկու կաթսաներով յուրաքանչյուրը՝ Q=2500Կվտ հզորությամբ:

Կաթսաները ապահովում են ջուր-ջերմատարի $T_1=80^{\circ}\text{C}$ և $T_2=60^{\circ}\text{C}$ ջերմաստիճանային պարամետրերը: Շենքին տաք ջրամատակարարում ապահովելու համար նախատեսված է տեղադրել երկու ծավալային ատաքացուցիչ յուրաքանչյուրը՝ $V=2000$ լ տարողությամբ: Ջրատաքացուցիչներն ապահովելու են մինչև $T_2=60^{\circ}\text{C}$ կենցաղային ջուր: Ջուրահեռ տեղադրված են նաև թիթեղային արագային ջրատաքացուցիչներ որոնք աշխատելու են առավելագույն բեռնվածության ժամանակ:

Ջերմատարի արհեստական շրջանառությունը համակարգերում ապահովելու համար՝ նախատեսված են տարբեր արտադրողականության շրջանառու պոմպեր:

Օդի արտածումը կաթսայատնից բնական է իրականացվում է եռապատիկ ծավալով երկու՝ Ø50մմ տրամագիծ ունեցող դեֆլեկտորների օգնությամբ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

1. Հողամասի մակերես 1.3989 հա
2. Կանաչապատման մակերես 6600 մ²
3. Կառուցապատման մակերես 3150 մ²
4. Անջրանցիկ մակերես (ճանապարհներ, սալվածքներ) 4239 մ²
4. Բնակարանների քանակը՝ 352 հատ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

1.5.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

1.5.3.1 Շինարարության կազմակերպչատեխնոլոգիական սխեման

Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմներ ընդհանուրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Հիմնական փուլ

Հողային աշխատանքների իրականացման համար առաջարկվում է JCB 4CX էքսկավատորը, որն օժտված է գրունտի փխրեցման սեպային կախովի սարքավորմամբ :

JCB 4CX էքսկավատորի տեխնիկական բնութագիրը

Չափսերը / երկարություն ,լայնություն ,բարձրություն / Շարժիչի հզորություն / ուժը	5.91 * 2.24 * 3.48 մ 100 ձ.տ.ժ. (74 կՎտ)
Դիմացի շերտի ծավալը	1.1 մ ³
Ետին շերտի ծավալը	0.33 մ ³
Ջանգվածը	7950 կգ
Փորման խորությունը	4.32մ
Փյուննող հիդրոմուր ճի առկայությունը	առկա

Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է СБ-69Б ավտոբետոնախառնիչով՝ վերամբարձի, ավտոբետոնապոմպի կամ ստացիոնար բետոնապոմպի միջոցով: Բետոնախառնուրդի մատակարարումը կիրականացվի մասնագիտացված ընկերության կողմից:

Մարդկանց շարժումը բետոնացված մակերևույթների վրա և կաղապարամածի տեղադրումը թույլատրվում է բետոնի 1,5 ՄՊա ամրության ձեռքբերումից հետո:

Հիմքի, սյան կաղապարամածի քանդումը թույլատրվում է բետոնի նախագծային 70 % ամրություն ձեռք բերումից հետո, ծածկի համար՝ 80 %:

Չմեռային պայմաններում երկաթբետոնե աշխատանքներն իրականացնելու ժամանակ առաջարկվում է կոնտակտային եղանակով (տաքացնող լարի միջոցով) բետոնի ջերմամշակումը :

Առաջարկվում է ПНСВ -1,2 մակնիշի 1,2 մմ տրամագծով պոլիվինիլքլորիդային մեկուսացումով ցինկապատ պողպատե ջղով լարի կիրառումը :

Էլեկտրասնուցումն իրականացվում է ТСДЗ-63/0,38, ТСДЗ-80, СПБ-80, КТП ТО-80/86 կամ КТП -63/0Б տիպի իջեցնող տրանսֆորմատորներով, որոնք օժտված են լարման իջեցման մի քանի աստիճաններով, ինչը թույլ է տալիս արտաքին օդի ջերմաստիճանի փոփոխման դեպքում կարգավորել ջերմային հզարությունը : Տաքացնող լարերով կարելի է ջերմամշակել միաձույլ կոնստրուկցիաները մինչև -30°С պայմաններում : 1մ³ բետոնի տաքացման համար միջինում անհրաժեշտ է 60 մ ПНСВ -1,2 մակնիշի լար :

1.5.3.2 Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը նախապես որոշվել է ըստ ՄՆԻՊ 1.04.03-85*-ի՝ հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը և շինարարական ծավալը:

1.5.3.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա՝ հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները :

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը ներկայացված է ստորև

- Աշտարակային կռունք KB - 403` 3 հատ
- Ինքնաթափ 20տ` 8 հատ
- Էքսկավատոր 0.65 մ³ շերտփով` 3 հատ
- Ավտոկռունկ` 3 հատ
- Բուլդոզեր` 2 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական տեխնիկայի կայանման և շինանյութի պահեստավորման համար ընկերության տարածքի սահմաններում հատկացվելու է մոտ 250քմ ասֆալտապատ տարածք:

1.5.3.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվող շինանյութը, մասնավորապես`

	Նյութ	քանակ	Ընդհ. քանակ
1	Ընդհանուր Ե/Բ կոնստրուցիաներ	խ.մ	28880
2	Ընդհանուր ամրաններ	տ	4048
3	Արտաքին պատի շար -բլոկ 200մմ (Ներառյալ միջբնակարանային միջնորումները)	ք.մ	53200
4	Արտաքին պատի շար -բլոկ100մմ (պատշգամբ)	ք.մ	5280
5	Ջերմամեկուսացում-փրփրապոլիստիրոլ	ք.մ	52800
6	Ապակեպատում- վիտրաժ/պատուհան	ք.մ	20240
7	Պատի երեսապատում-Ց/Ա սվաղ + ներկ	ք.մ	27920
8	Պատի երեսապատում-Գյուղական շար	ք.մ	12960
9	Պատի երեսապատում-Սրբատաշ շար	ք.մ	41400
10	Արտաքին բազրիք մետաղական	գ.մ	880

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվող շինանյութը կպահեստավորվի շինհրապարակում, հատուկ նախատեսված վայրում, ծածկի տակ :

Շինարարության ջրի և էներգառեսուրսների պահանջարկը

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների , կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա :

Էներգառեսուրսների և ջրի պահանջարկ

1. Էլեկտրաէներգիա Քհաշվ , ԿՎտ 112.0
2. Ջուր մ³/օր`

- կոմունալ-կենցաղային՝ 0.657

- տարածքի ջրցան՝ 0.75

Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10 լ/վրկ :

Ստորև բերվում են ջրօգտագործման և անհրաժեշտ էլեկտրական հզորության հաշվարկները:
ՀԱՇՎԱՐԿ

անհրաժեշտ էլեկտրական հզորության, կՎտ

1. Վերամբարձ կոունկ 55
2. Տոփանիչ CR 3/60 / 2 հատ 10
3. Եռակցման սարքեր /2 հատ 10
4. Տարբեր էլեկտրաուժային սարքավորումներ 24
/հատիչներ, դուրեր, սղոցներ և այլն / 2 կոմպլեկտ
5. Էլեկտրաթրթրիչներ 22
6. Շինհրապարակի լուսավորում և կենցաղ 10
7. Շենքի լուսավորում 10

P տեղ.=141 կՎտ

P հաշվ . = Pտեղ. * Kպահանջ . = 141 կՎտ * 0,8 = 112.8 կՎտ

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ

N – ԻՏՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 25 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1800 օր

$$W_{\text{խ.տ.}} = (2 \times 0.016 + 25 \times 0.025) \times 1800 = 1182.6 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.657 \text{ մ}^3/\text{օր.}$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 750

$$U_1 = 500 \times 0.0015 \times 750 = 562.5 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.75 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1745.1 մ³/շին. ժամ:

Շինաշխատանքների իրականացման ջրամատակարարումն իրականացվել ու է համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում):

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն :

1.5.3.5 Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող միջոցառումների համալիր :

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է .

- ա/ կոնստրուկցիաների , շինվածքների , նյութերի և սարքավորումների , աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը ;
- բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը ;
- գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը :

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի

տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը ; շինարարական կոնստրուկցիաների , շինվածքների , իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

1.5.3.6 Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության պահանջներ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:


1.5.4 Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ

Դիտարկվող հողակտոր





ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ, Մ1:500



<< Ալվինա հյուրանոցային համալիր >> ՓԲԸ

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հաստատում են՝
Ա. Հարությունյան

ին Հողատկացման հիմքը

« _____ » _____ 201_թ.

Կոտայք

Ծաղկաձոր


Հասցե

կ. տ.

Մարզ

Համայնք

Մասշտաբ 1: 5000



ՀՈՂԱՄԱՍԻ

Շ Ի Ն ՈՒ Թ Յ Ա Ն

Մակերեսը (հա)	1.3989	Կոորդինատներ X Y	Մակերես մ²	Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը)	Համարը, ըստ հողամասի հատակագծի	Գործառնական նշանակությունը (անվանումը)	Շ Ի Ն ՈՒ Թ Յ Ա Ն			
							Կոորդինատներ X Y	Մակերես մ²	Մակերես մ²	Մակերես մ²
Ծածկագիրը	0026-	1 8475273.617 4488188.961	57.23		1	Կիսակառույց հյուրանոցային համալիր	1	8475212.998	4488216.269	56.43
Նպատակային նշանակությունը	Հատուկ պահպանվող	2 8475282.217 4488132.38	48.23				2	8475268.93	4488223.727	35.23
Գործառնական նշանակությունը	Հանգստի համար նախատեսված	3 8475234.252 4488127.361	17.03				3	8475273.813	4488188.808	8.19
Հողամասը ծանրաբեռնված է		4 8475217.553 4488130.725	5.55				4	8475267.477	4488187.957	12.03
		5 8475212.092 4488131.704	31.7				5	8475269.117	4488178.04	4.07
		6 8475194.947 4488148.074	3.17				6	8475265.085	4488175.498	7.68
		7 8475182.235 4488149.709	20.77				7	8475266.248	4488187.908	4.14
		8 8475169.837 4488166.37	27.56				8	8475262.14	4488187.42	7.98
		9 8475159.628 4488191.966	13.72				9	8475263.174	4488159.507	3.65
		10 8475154.186 4488204.56	13.35				10	8475259.593	4488158.983	7.94
		11 8475156.758 4488217.66	6.41				11	8475260.702	4488151.127	3.73
		12 8475156.112 4488223.922	7.75				12	8475257.008	4488150.644	7.38
		13 8475162.381 4488230.387	31.95				13	8475257.782	4488143.307	19.74
		14 8475189.076 4488247.945	8.24				14	8475238.19	4488140.738	7.38
		15 8475195.397 4488255.314	16.81				15	8475237.289	4488148.06	3.62
		16 8475200.092 4488263.465	2.9				16	8475233.889	4488147.842	7.97
		17 8475202.796 4488264.823	12.3				17	8475232.833	4488155.54	3.83
		18 8475213.928 4488269.763	6.22				18	8475229.038	4488155.088	7.96
		19 8475233.676 4488275.335	20.52				19	8475228.002	4488162.96	4.05
		20 8475239.667 4488277.025	22.88				20	8475223.988	4488162.434	7.98
		21 8475262.119 4488281.436	0.65				21	8475222.949	4488170.35	3.9
		22 8475262.75 4488281.259	51.24				22	8475219.078	4488169.842	46.82
		23 8475268.043 4488230.303	6.75							
		24 8475269.964 4488223.62	26.62							
		25 8475272.505 4488197.233	5.8							
		26 8475273.278 4488191.466	2.55							
		1 8475273.617 4488188.961								

Կատարող

(ստորագրություն)

0220

Որակավորման վկայականի համարը

Իրավբանական անձի

85.110.1045436

(պետական գրանցման համարը)

Էղիկ Վիրաբյան

Անուն, ազգանուն

06. 08. 2012թ

տրման ամիս, ամսաթիվը

«ԳԵՈԼԵՆԴ» ՍՊԸ

(անվանումը)

(ստորագրություն)



23. 01. 2019թ

					Շ Ի Ն Ո Ւ Թ Յ Ա Ն						
Երջարարման U (բնկան) կետեր	Y	X	Թանկ ընկեր %		Համարը՝ ըստ հողամասի հատակագծի	Գործառնական նշանակությունը (անվանումը)	Երջարարման U (բնկան) կետեր	Y	X	Թանկ ընկեր %	
				Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը)		Գործառնական նշանակությունը (անվանումը)					
1	8475273.617	4488188.961	57.23				1	8475212.998	4488216.269	56.43	
2	8475282.217	4488132.38	48.23					2	8475268.93	4488223.727	35.23
3	8475234.252	4488127.361	17.03					3	8475273.613	4488188.806	6.19
4	8475217.553	4488130.725	5.55					4	8475267.477	4488187.957	12.03
5	8475212.092	4488131.704	31.7					5	8475269.117	4488176.04	4.07
6	8475184.947	4488148.074	3.17					6	8475265.085	4488175.498	7.68
7	8475182.235	4488149.709	20.77				1	8475266.248	4488167.906	4.14	
8	8475169.837	4488166.37	27.56					8	8475262.14	4488167.42	7.98
9	8475159.628	4488191.966	13.72					9	8475263.174	4488159.507	3.65
10	8475154.186	4488204.56	13.35					10	8475259.563	4488158.983	7.94
11	8475156.758	4488217.66	6.41					11	8475260.702	4488151.127	3.73
12	8475158.112	4488223.922	7.75					12	8475257.008	4488150.644	7.38
13	8475162.381	4488230.387	31.95					13	8475257.762	4488143.307	19.74
14	8475189.076	4488247.946	8.24					14	8475238.19	4488140.736	7.38
15	8475185.397	4488255.314	16.81					15	8475237.269	4488148.06	3.62
16	8475200.092	4488263.485	2.9					16	8475233.669	4488147.642	7.97
17	8475202.798	4488264.523	12.3					17	8475232.633	4488155.54	3.63
18	8475213.928	4488269.763	20.52					18	8475229.038	4488155.068	7.96
19	8475233.676	4488275.335	6.22					19	8475228.002	4488162.96	4.05
20	8475239.667	4488277.025	22.88					20	8475223.988	4488162.434	7.98
21	8475262.119	4488281.436	0.65					21	8475222.949	4488170.35	3.9
22	8475262.75	4488281.269	51.24					22	8475219.078	4488169.842	46.82
23	8475268.043	4488230.303	6.75								
24	8475268.984	4488223.62	26.62								
25	8475272.505	4488197.233	5.8								
26	8475273.278	4488191.486	2.55								
1	8475273.617	4488188.961	2.55								

1.5.5 Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԻ

NN	Աշխատանքների անվանումը	ԱՄԻՍՆԵՐ																																																											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	26	28	30	32	34	36	38	40	42	44	46	48	50	52	54	56	58	60																		
1	Շինարապարակի կազմակերպում	■																																																											
2	Միանույլ ե/բ գոտիների իրականացում		■																																																										
3	Միանույլ ե/բ միջհարկային ծածկի իրականացում			■																																																									
4	Պատերի շարվազքի իրականացում				■																																																								
5	Միանույլ ե/բ աստիճանի իրականացում					■																																																							
6	Միանույլ ե/բ գոտիների իրականացում						■																																																						
7	Միանույլ ե/բ միջհարկային ծածկի իրականացում							■																																																					
8	Պատերի շարվազքի իրականացում								■																																																				
9	Միանույլ ե/բ աստիճանի իրականացում									■																																																			
10	Մետաղական կոնստրուկցիայի մոնտաժում										■																																																		
11	Տանիքի իրականացում											■																																																	
12	Իմեներական աշխատանքներ																				■																																								
13	Չարդարման աշխատանքներ																						■																																						
14	Նոր մասնաշենքերի հողային աշխատանքներ																									■																																			
15	Չիմքերի իրականացում																																																												
16	Միանույլ ե/բ կարկասի իրականացում																																																												
17	Արտաքին պատերի իրականացում																																																												
18	Երեսպատման աշխատանքների իրականացում																																																												
19	Տանիքի իրականացում																																																												
20	Իմեներական աշխատանքներ																																																												
21	Չարդարման աշխատանքներ																																																												

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ 1800 ՕՐ Է:

1.5.6 *Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ*

Կառուցապատման ենթակա գտնվում է Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր Խ. Մուրադյան փող. 3 հասցեում:

Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 0,46136հա:

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը՝ 27 մարդ, որից

- Բանվորներ -25 մարդ
- Ինժեներներ -2 մարդ

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝ 16000մ³

Հետլիցք՝ 5000մ³

Ավելացած հողային զանգվածը մասամբ կօգտագործվի տարածքի բարեկարգման համար, իսկ մնացած մասը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր:

1.5.7 *Էլ. մատակարարում*

Բազմաֆունքիոնալ բնակելի համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվի համաձայն 25.06.2019թ. <<ՀԵՑ>> ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի (կցված հավելվածների բաժնում):

1.5.8 *Ջրամատակարարում և ջրահեռացում*

Բազմաֆունքիոնալ բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը կիրականացվի համաձայն 20.08.2020թ. Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում):

Համաձայն տեխնիկական պայմանի ջրամատակարարումը իրականացվելու է հյուրանոցային համալիրի դիմացով անցնող d=110մմ, P=0.5մթն պ/էթ ջրագծից:

Կոյուղաջրերը ուղղվելու են դեպի Կեչառեցի փողոցով անցնող d=300մմ կոյուղագիծ:

1.5.9 *Գազամատակարարում*

Բազմաֆունքիոնալ բնակելի համալիրի գազամատակարարումը իրականացնելու համար կառուցապատողը կդիմի «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:

1.5.10 *Կանաչապատման աշխատանքներ*

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:


Կանաչապատման մակերես մինչև 40% է ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի: Էլեմենտներնի ընտրությունը կկատարվի հաշվի առնելով համալիրի նախագծի առանձնահատկությունները և տարածաշրջանի բուսականությունը:

Նախատեսվող բուսականությանը կազմը՝



- Թղկի կարմիր - 12 հատ
- Կատալպա – 74 հատ
- Չիակասկ – 12 հատ
- Գնդաձև ակացիա – 104 հատ
- Հուդայածառ – 18 հատ
- Բարբարիս – 150 հատ
- Գնդաձև իլենի – 295 հատ
- Սյունաձև թույս – 349 հատ
- Սիզամարգ – 10553մ²
- Գնդաձև սամշիտ – 55 հատ
- Փովոդ գիհի – 74 հատ
- Սամշիտ – 440 գմ

Նախատեսվում է կաթիլային ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի միանալով մոտակա ոռոգման ցանցին կամ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված ընկերության կողմից:



ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵՎԱՐԳՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ, Մ1:300





26	ԱՐԿԻԹԵԿԱԿԱՆ ԿՐԹՈՒՄ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԿԻԹԵԿԱԿԱՆ ԿՐԹՈՒՄԻ ՎԵՐԿՈՒՄԻ ԳԵՆԵՐԱԼ ԿԱՆՍՏՐԱԿՏԻ ՎԵՐԿՈՒՄ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԿԻԹԵԿԱԿԱՆ ԿՐԹՈՒՄԻ ՎԵՐԿՈՒՄԻ ԳԵՆԵՐԱԼ ԿԱՆՍՏՐԱԿՏԻ ՎԵՐԿՈՒՄ	ՍՍՏ	ՍՍՏ
27	ՍՄՆՈՒՄ	ՍՄՆՈՒՄ ԲԱՐԵՎԱՐԳՄԱՆ ԿՐԹՈՒՄ	ՍՄՆՈՒՄ ԲԱՐԵՎԱՐԳՄԱՆ ԿՐԹՈՒՄ	ՍՍՏ	ՍՍՏ



1 ԹՆԿԻ ԿԱՐՍՈՐ-112հատ



5 ԿԱՏԱԼՊԱ - 74հատ



9 ՉԻՍԿԱՍԿ-12հատ



2 ԳԼԴԱԾԵԿ ԱՍԱՅԻԱ-104հատ

6 ԴՈՒՂԱՅԱՏԱՈ-18 հատ

10 ԲԱՐԲԱՐԻՍ - 150 հատ

3 ԳԼԴԱԾԵԿ ԻԼԵՆԻ-295հատ






7 ԱՅՈՒՆԱԾԵԿ ԹՈՐՅԱ-349 հատ




1 մ²-ում ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է 0.033կգ ԽՈՏԻ ՍԵՐՄ
ԸՆԴԱՄԵՆԸ-348 կգ ԽՈՏԻ ՍԵՐՄ

ՍԻՋԱՍԱՐԳ-10553.5մ²

4 ԳԼԴԱԾԵԿ ԱՍԱՇԻՏ-55հատ

8 ՓՈՎՈՂ ԳԻՅԻ-74 հատ



1 գմ-ում ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՏԵՂԱԴՐԵԼ 4 ԹՈՒՓ
ԸՆԴԱՄԵՆԸ-1760 ԹՈՒՓ

ՍԱՄՇԻՏ-440գմ

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը

Վերակառուցվող հյուրանոցային համալիրը գտնվում է Կոտայքի մարզ ք. Ծաղկաձոր Խ. Սուրադյան փող. 3 հասցեում: Հողամասի հիմնական մակերեսը համաձայն սեփականության վկայականի, կադաստրային ծածկագիր՝ 07-005-0026-0760, կազմում է 1.3989 հա:

Նախատեսվող աշխատանքների ընթացքում ծառահատումներ չեն իրականացվում:

Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան:

Համաձայն տեղամասի երկրաբանական ուսումնասիրության առաջին շերտը՝ լիցք կազմված խճի, խճավազի և ավազակավերի խառնուրդից: Գրունտը խոնավ է: Շերտի հորատված հզորությունը 2,0 մետր է: Դրանք ժամանակակից տեխնածին առաջացումներ են:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Փամբակի լեռնաշղթայի միջնամասից դեպի հարավ-արևելք տարածվող Ծաղկունյաց լեռների Թեղենիս լեռան արևելյան լանջին՝ հարավից հյուսիս 120 անկումով, որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1806-1788 մետրերի սահմաններում:

Ծաղկաձոր քաղաքը տեղակայված է Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիս-արևելյան ճյուղավորման Թեղենիս լեռան (2846մ) արևելյան լանջին և ընդգրկում է Տանձաղբյուր գետի ավազանը (ծովի մակերևույթից 1830-2000մ բարձրության վրա): Ռելիեֆը բարդ է, հորիզոնական մասնատվածության խտությունը կազմում է 1.2 կմ/կմ²: Հովտաձորակային ցանցի խտությունը 3.0 հատ/ կմ² է: Մակերևույթի թեքության անկյունը կազմում է 4-120:

Երևանի հետ կապված է 51 կմ բարեկարգ ասֆալտապատ մայրուղով: Մայրաքաղաքի հետ հաղորդակցությունն ավտոմոբիլային է, մասնակիորեն՝ երկթուղային: Ծաղկաձոր քաղաքի ընդհանուր տարածքը կազմում է 1618,29 հա, բնակչությունը՝ 1503 մարդ: Ռեսուրսների հիմնական տեսակներն են ռելիեֆային և պատմամշակութային ռեսուրսները, անտառային ֆոնդի հողերը:

Համայնքում գերիշխող են հանգստի կազմակերպման, սպորտի, տուրիզմի, առողջարարական և սպասարկաման ծառայությունները: Շնորհիվ կազդուրիչ անտառների և բուժիչ կլիմայի, գեղատեսիլ բնապատկերների և լեռնագրական պայմանների առանձնահատկությունների, Ծաղկաձորը համարվում է հանրապետության ամբողջ տարի գործող կարևորագույն հանգստավայրերից մեկը և, ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 1-ի N95-Ա որոշմամբ այն հայտարարված է որպես Զբոսաշրջային կենտրոն:

Ծաղկաձորը գտնվում է բարձրադիր լեռնային գոտում, այդ իսկ պատճառով ջերմաստիճանը ամռանը այստեղ չի գերազանցում +26 աստիճանը, իսկ ձմռանը +5: Ձմռանը կլիման նույնպես մեղմ է: Գտնվելով չոր մերձարևադարձային գոտում՝ տարածքի կլիման բնութագրվում է որպես բարձրլեռնային հատուկ՝ չափավոր տաք, համեմատաբար խոնավ ամառով և չափավոր ցուրտ, անհողմ, ձյունառատ ձմեռով: Տեղումների տարեկան քանակը 789մմ է, որից 506 մմ՝ տարվա տաք սեզոնում (ապրիլ-հոկտեմբեր):

Օդը մշտապես չոր է, այդ պատճառով ցրտերը այնպես էլ ուժեղ չեն զգացվում: Ձմռանը սովորական ջերմաստիճանը լինում է օրվա ընթացքում +5, գիշերը մինչև -20: Եղանակը փոխվում է անկանխատեսելիորեն: Սովորաբար Ծաղկաձորում դիտվում է արևային եղանակ: Արևային օրերի քանակը տարեկան կազմում է 230-260 օր: Սակայն ձմռանը հաճախակի դիտվում են տեղումներ ձյան տեսքով: Ընդ որում, սովորաբար մինչև 0.5-1մ միանգամից և այնուհետև նորից լինում է արևային օր: Սովորաբար արևոտ օրերի 70%-ը քամի չի լինում, իսկ 30% դիտվում է քամի: Տարածքում գերակշռում են արևմտյան քամիները: Քամու միջին արագությունը հիմնականում տատանվում է 0.1-3.0մ/վրկ սահմաններում:

Շրջանի օդերևութաբանական պարամետրերը ըստ «Հրազդանի օդերևութաբանական կայանի տվյալների բերված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 1. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի օդերևութաբանական անվանումը	Քարտուրյունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	մայիս	Հունիս	Հուլիս	օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդանի	1875	-8.3	-6.6	-2.4	4.8	10.2	13.6	17.0	16.8	13.4	7.4	1.4	-5.1	5.2	-31	33

Աղյուսակ 2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի օդերևութաբանական անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	մայիս	Հունիս	Հուլիս	օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հրազդանի	79	77	79	70	69	69	67	62	63	67	75	79	71	74	49

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը մմ միջին ամսական / օրական առավելագույն												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, մմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	մայիս	Հունիս	Հուլիս	օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդանի	45	53	67	85	102	69	44	31	34	63	49	46	688	106	120	310
	30	42	40	52	39	42	47	42	49	64	45	34	64			

Աղյուսակ 4. Բնակավայրի տեղակայման բնութագրեր

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Կլիմայական շրջան
1	2	3
Հրազդանի	1875	Ց

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքի գլխավոր ջրային երակն է հանդիսանում Տանձաղբյուր գետը: Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Տանձաղբյուր գետի հովտի աջ թևում՝ թեք դեյուվիալ լանջի վրա:

Տեղամասում գրունտային ջրերն ունեն ընդհանուր տարածում, որոնք սնուցվում են մթնոլորտային տեղումների, ձնհալի հաշվին: Փորված հորատանցքերով հատվել է գրունտային ջրերի երկու հորիզոն՝ առաջին հորիզոնը 2,4-6,0 մետր խորություններում, իսկ երկրորդ հորիզոնը 10,6-13,2 մետր խորություններում (կախված ռելիեֆի նիշերից):

Տեղամասում կապված ձնհալի և մթնոլորտային տեղումների հետ, դիտվում են նաև մերձակերևութային ստոր-ետնյա ջրերի առատություն՝ ենթաբուսահողային ջրերի տեսքով, որոնք ուսումնասիրվող տեղամաս թափանցում են հարավային կողմից:

Համաձայն ունեցած ֆոնդային նյութերի տվյալների գրունտային ջրերի առավելագույն բարձրացումը կարելի է ընդունել 0,3-0,5 մետր բարձր ֆիքսված մակարդակից:

Տեկտոնական տեսակետից տարածաշրջանի առավել խոշոր տեկտոնական կառուցվածքը դա Մարմարիկի խորը տեղադրման խզվածքն է, որը դիտվում է Մարմարիկ .ետի ամբողջ երկայնքով: Խզվածքի ուղեգծի երկարությամբ առանձնացվում են վերին կավճի ու պալեո-ենի նստվածքային ապարների խոշոր շերտերը:

